«ՅՈՒՆԻԼԻԶԻՆԳ» ՎԿ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.

ԵՐԵՎԱՆ 2025

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

30.05.2025թ.
N 012517

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ.Պետրոսյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ
Բաժնետերերին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության շրջանցում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր

Շ. Թաշչիյան

30.05.2025թ.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	11,626	14,628
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(128)	(8)
Այլ գործառնական եկամուտ	6	452	422
Գործառնական եկամուտ		**11,950**	**15,042**
Վարկերից և այլ փոխառություններից առաջացած վերադարձ/կորուստներ		3,299	(2,801)
Անձնակազմի գծով ծախսեր	7	(9,242)	(4,857)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	8	(3,264)	(380)
Այլ ծախսեր	9	(7,000)	(6,673)
Շահույթ մինչև հարկվելը		**(4,257)**	**331**
Շահութահարկի գծով ծախս	10	115	10
Շահույթ հարկումից հետո		**(4,142)**	**341**
Այլ համապարփակ եկամուտ			
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ արդյունք		**(4,142)**	**341**

1-22 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	11	2,185	9,888
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	12	119,024	93,266
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	13	-	21,711
Ոչ նյութական ակտիվներ	14	3,394	4,025
Հետաձգված հարկային ակտիվներ		161	47
Այլ ակտիվներ	15	5,000	5,000
Ընդամենը՝ ակտիվներ		**129,764**	**133,937**
Պարտավորություններ			
Պարտավորություններ բյուջեի գծով		138	145
Այլ պարտավորություններ	16	1,638	1,662
Ընդամենը՝ պարտավորություններ		**1,776**	**1,807**
Կանոնադրական կապիտալ	17	120,000	120,000
Գլխավոր պահուստ		3,017	3,017
Վերագիանատման պահուստ		5,166	5,166
Կուտակված շահույթ		(195)	3,947
Ընդամենը՝ կապիտալ		127,988	132,130
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		129,764	133,937

Գեորգի Մնացականյան
Գործադիր տնօրեն

Սվետլանա Մանուչարյան
Գլխավոր հաշվապահ

30.05.2025թ.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդը 01 հունվարի 2023թ.	**120,000**	**3,017**	**5,166**	**46,190**	**174,373**
Նախորդ տարիների սխալի ուղղում	**-**	**-**	**-**	4,177	**4,177**
Վերահաշվարկված մնացորդ 01 հունվարի 2023թ.	**120,000**	**3,017**	**5,166**	**50,367**	**178,550**
Տարվա շահույթ	-	-	**-**	341	341
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	**-**	-	-
Ընդամենը տարվա ֆինանսական արդյունք	-	-	**-**	**341**	**341341**
Ներքին շարժեր այդ թվում՝					
Շահաբաժնի հայտարարում	-	-	-	(46,761)	**(46,761)**
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	**-**	-	-
Մնացորդը 31 դեկտեմբերի 2023թ.	**120,000**	**3,017**	**5,166**	**3,947**	**132,130**
Մնացորդը 01 հունվարի 2024թ.	**120,000**	**3,017**	**5,166**	**46,190**	**174,373**
Տարվա շահույթ	-	-	**-**	(4,142)	(4,142)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	**-**	-	-
Ընդամենը տարվա ֆինանսական արդյունք	-	-	**-**	**-**	**-0**
Ներքին շարժեր այդ թվում՝					
Շահաբաժնի հայտարարում	-	-	-	-	**-**
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	-	**-**	-	-
Մնացորդը 31 դեկտեմբերի 2024թ.	**120,000**	**3,017**	**5,166**	**(195)**	**127,988**

1-22 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	11,359	17,188
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(8,438)	(4,627)
Վճարված հարկեր	(2,238)	(6,181)
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	452	354
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**1,135**	**6,734**
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(25,758)	12,500
Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարներ նվազում (ավելացում)	21,711	35,651
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(4,869)	(3,860)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**(7,781)**	**51,025**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վճարված շահաբաժիններ	-	(46,761)
Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	**-**	**(46,761)**
Դրամական միջոցների զուտ հոսք	**(7,781)**	**4,264**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**9,988**	**5,724**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**2,207**	**9,988**

1-22 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Հիմնական գործունեություն

”Յունիլիզինգ” վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է:

Կազմակերպությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ. նոյեմբերի 04-ին:

Վարկային կազմակերպության գրանցման վկայականի համարն է՝ 24:

Կազմակերպության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Սայաթ-Նովա 1:

2. Գործարար միջավայր

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում Հայաստանում: Հետևաբար Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում:

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն դրանք ենթակա են հաճախակի փոփոխությունների և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Կազմակերպության գործունեության վրա կանխատեսելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

3. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն
Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (”ՖՀՄՍ”) պահանջների համաձայն:

Չափման հիմունքները
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական

ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ
Կազմակերպության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում
Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

4.1. Եկամուտների և ծախսերի ճանաչում
Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարվոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ
Ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Վարկային կազմակերպությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:
Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարներից եկամուտները, գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում՝ կիրառելով ադյունավետ տոկոսադրույքը, որն այն դրույքն է, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական ներհոսքերը ճշգրիտ կերպով զեղչում է մինչև այդ ակտիվի սկզբնական ճանաչման պահի զուտ հաշվեկշռային արժեքը:

Եթե ֆինանսական ակտիվները կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

4.2. Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

4.3. Հարկային հաշվառում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գուդվիլի կամ կազմակերպությունների միավորում չհանիդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Կազմակերպության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են՝այլ ծախսեր՞ հոդվածում:

4.4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են հաշիվները բանկերում, որոնք կարճ ժամանակահատվածում կարող են փոխարկվել կանխիկ դրամի, և արժեքի փոփոխման չնչին ռիսկ են պարունակում: Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով:

4.5. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

Իր բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը օգտագործում է բանկում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկում տեղաբաշխված ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Կազմակերպության ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում:

4.6. Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռք բերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա)«իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ՝ (ԻԱՇԿՎ), բ)«իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ՝ (ԻԱԱՀՖԱ), գ)ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

●այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և

- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են, և
- սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

●այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և

●դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից իվեր նշանակալիորեն աճել է, ապապահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով: ԱՊԿ-ը պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատական է: Դա չափվում է որպես դրամական պակասուրդի (պայմանագրի համաձայն Կազմակերպությանը հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերություններ, որոնք Կազմակերպությունն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Կազմակերպությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Կազմակերպությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

ԻԱՇԿՎ ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՇԿՎ չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակներով կամ դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:
Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե՝
●այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
●սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Կազմակերպության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
●այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեդջավորման գործիք:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:
Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Կազմակերպության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որ ի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

4.8. Հիմնական միջոցներ
Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Վարկային կազմակերպությանը ետ վերադարձման:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են

Գրասենյակային գույք	5 տարի
Համակարգչային սարքավորումներ	1 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են: Վերագնահատման արդյունքները արտացոլվում են ՀՀՄՍ 16-ով սահմանված կարգով:

4.9. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:
Ոչ նյութական ակտվիները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտվիները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

4.10. Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են հաճախորդներից ներգրավված փոխառություններ, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

4.11. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Կազմակերպությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

4.12. Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են: Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ կարող են հարկվել:

4.13. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

5. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	հազար դրամ	
	2024թ.	**2023թ.**
Տոկոսային եկամուտ		
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից	11,010	8,625
Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխառություններից (լիզինգ)	616	6,003
Ընդամենը տոկոսային եկամուտ	**11,626**	**14,628**

6. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

	հազար դրամ	
	2024թ.	**2023թ.**
Այլ գործառնական եկամուտ	452	422
Ընդամենը այլ գործառնական եկամուտ	**452**	**422**

7. Անձնակազմի գծով ծախսեր

	հազար դրամ	
	2024թ.	**2023թ.**
Աշխատավարձեր	(8,438)	(4,435)
Արձակուրդներ	(804)	(422)
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**(9,242)**	**(4,857)**

8. Այլ ընդանուր վարչական ծախսեր

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Շենքերի և այլ հիմնական միջոցների վարձակալության գծով	(3,114)	(224)
Կապի և հեռահաղորդակցության գծով	-	(27)
Գրասենյակային ծախսեր	(94)	(129)
Այլ կառավարչական ծախսեր	(56)	-
Ընդամենը այլ ընդանուր վարչական ծախսեր	**(3,264)**	**(380)**

9. Այլ ծախսեր

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	(369)	(44)
Ամորտիզացիոն մասհանումներ	(631)	(629)
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(6,000)	(6,000)
Ընդամենը այլ ծախսեր	**(7,000)**	**(6,673)**

10. Շահութահարկի գծով ծախս

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Շահութահարկի գծով ծախս	-	(37)
Հետաձգված հարկի գծով (ծախս)/փոխհատուցում	115	47
Ընդամենը շահութահարկի գծով ծախսեր	**115**	**10**

11. Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Ընթացիկ հաշիվներ բանկում	2,207	9,988
Ընթացիկ հաշիվների պահուստ	(22)	(100)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**2,185**	**9,888**

12. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Բանկերում ներդրված ավանդներ	120,246	94,116
Հնարավոր կորուստների պահուստ	(1,222)	(850)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	**119,024**	**93,266**

13. Հաճախորդներին տրված վարկեր

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	-	31,588
Վարկերի արժեզրկման պահուստ	-	(6,263)
Ընդամենը վարկեր հաճախորդներին	**-**	**25,325**

Տրամադրված վարկերի վերլուծությունն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը.

		հազար դրամ
	2024թ.	2023թ.
Արտադրություն	-	25,325
	-	25,325
Վարկերի արժեզրկման պահուստ	-	(3,614)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**-**	**21,711**

14. Ոչ նյութական ակտիվներ

	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք 31.12.2023թ. դրությամբ	**6,300**	**6,300**
Վերագնահատում	-	-
Դուրս գրում	-	-
Սկզբնական արժեք 31.12.2023թ. դրությամբ	**6,300**	**6,300**
Վերագնահատում	-	-
Դուրս գրում	-	-
Սկզբնական արժեք 31.12.2024թ. դրությամբ	**6,300**	**6,300**
Կուտակված մաշվածություն		
Սկզբնական արժեք 31.12.2023թ. դրությամբ	**1,645**	**1,645**
Ավելացում	630	630
Դուրս գրում	-	-
Սկզբնական արժեք 31.12.2023թ. դրությամբ	**2,275**	**2,275**
Ավելացում	631	631
Դուրս գրում	-	-
Սկզբնական արժեք 31.12.2024թ. դրությամբ	**2,906**	**2,906**
Հաշվեկշռային արժեք 31.12.2023թ.	**4,025**	**4,025**
Հաշվեկշռային արժեք 31.12.2024թ.	**3,394**	**3,394**

15. Այլ ակտիվներ

		հազար դրամ
	2024թ.	2023թ.
Պետական տուրք	5,000	5,000
Ընդամենը այլ ակտիվներ	**5,000**	**5,000**

16. Այլ պարտավորություններ

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Աշխատավարձ և նմանատիպ վճարներ	1633	830
Այլ պարտավորություններ	5	832
Ընդամենը այլ պարտավորություններ	**1,638**	**1,662**

17. Կանոնադրական Կապիտալ

Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 120,000 հազար դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ բանկի բաժնետերերն են՝

Բաժնետերերի անվանումը	Մասնակցության գումարը /հազ. դրամ/	Մասնակցության չափը % հարաբ.	Մասնակցի գործունեության տեսակը
«Պոլիգրաֆիա» ՓԲԸ	118 800 հազ. դրամ	99 %	առևտրային
Վարդան Աթայան	1 200 հազ. դրամ	1 %	ֆիզիկական անձ

18. Պայմանական պարտավորություններ

Հարկային ու իրավական պարտավորություններ
ՀՀ հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների կարիք ունի: Հաճախ դրանց մեկնաբանությունները տարակարծություններ են առաջացնում տարբեր հարկային և իրավասու մարմինների միջև:

Ղեկավարությունը համոզված է, որ իր Կազմակերպությունը գործունեություն է ծավալել համաձայն օրենսդրության պահանջների:

Առ 31 դեկտեմբեր 2024թ. Կազմակերպության դեմ չի ներկայացվել ոչ մի դատական հայց կամ բողոք: Այդ պատճառով Կազմակերպությունը չի նախատեսել նման հարկային կամ դատական պարտավորությունների պահուստ:

19. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24–ի՝ ՛՛Փոխկապակցված կողմերի բացահայտում՛՛, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Կազմակերպության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Կազմակերպությունը փոխկապակցված կողմերի հետ գործարքների չունի:

Ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումները ներկայացված են ստորև.

		հազար դրամ
	2024թ.	**2023թ.**
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	9,242	4,857
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումներ	**9,242**	**4,857**

20. Ակտիվների և պարտավորությունների մարման ժանկետների վերլուծություն

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը ըստ նրանց սպասվող մարման ժամկետների:

առ 31 դեկտեմբեր 2024թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	2,185	-	-	-	-	**2,185**
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	396	-	118,628	-	-	**119,024**
	2,581	**-**	**118,628**	**-**	**-**	**121,209**
Պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	138	-	-	-	-	138
Այլ պարտավորություններ	1,638	-	-	-	-	**1,638**
	1,776	-	-	-	-	**1,776**
Զուտ դիրք	**805**	**-**	**118,660**	**-**	**-**	**119,433**
Կուտակային ճեղքվածք	**805**	**805**	**119,433**	**119,433**	**119,433**	

առ 31 դեկտեմբեր 2023թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	9,888	-	-	-	-	**9,888**
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	616	-	92,650	-	-	**93,266**
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	13,182	600	2,897	5,032	-	**21,711**
	23,686	**600**	**95,547**	**5,032**	**-**	**124,865**
Պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	145	-	-	-	-	145
Այլ պարտավորություններ	830					**830**
	975					**975**
Զուտ դիրք	**22,711**	**600**	**95,547**	**5,032**	**-**	**123,890**
Կուտակային ճեղքվածք	**22,711**	**23,311**	**118,858**	**123,890**	**123,890**	

21. Ռիսկի կառավարում

Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկը հանդիսանում է ֆինանսական գործունության անբաժանելի մասը, և գործառնական ռիսկերը գործունեության ծավալման անխուսափելի հետևանքն են: Այդ պատճառով Կազմակերպության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Կազմակերպության վիճակի վրա դրանց անցանկալի ազդեցությունները: Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականությունը նպատակ ունի ախտորոշելու և վերլուծելու ռիսկերը, սահմանելու ռիսկի համապատասխան սահմանչափերը և վերահսկումները, և վերահսկելու ռիսկերը և համապատասխանությունը սահմանաչափերին՝ օգտագործելով արժանահավատ և ժամանակակից տեղեկատվական համակարգերը:

Ռիսկի կառավարումը իրականացնում է Կազմակերպության ղեկավար անձնակազմը՝ առաջնորդվելով Խորհրդի կողմից հաստատված քաղաքականությամբ: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և հեջավորում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Կազմակերպության գործառնական միավորների հետ: Ռիսկի կարևորագույն տեսակներն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկերը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը:

21.1 Պարտքային ռիսկ

Կազմակերպությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ռիսկ, որ պայմանագրի մյուս կողմը, չիրականացնելով իր պարտավորությունը, Կազմակերպությանը կպատճառի ֆինանսական վնաս: Վարկային ռիսկը Կազմակերպության գործունեության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով Ղեկավար անձնակազմը ավելի մեծ ուշադրությամբ է վերահսկում այն: Պարտքային ռիսկը հիմնականում կապված է վարկային գործունեության հետ:

<u>Վարկային ռիսկի առավելագույն չափն առանց գրավի կամ այլ վարկային ապահովման</u>

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկի վատագույն տարբերակը առ 31 դեկտեմբեր 2024թ. և 2023թ., առանց հաշվի առնելու ցանկացած գրավ կամ այլ վարկային ապահովումներ: Հաշվեկշռային ակտիվների առումով, վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

հազար դրամ

	Ծանոթագրություն	Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 31 դեկտեմբեր 2024թ.	Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 31 դեկտեմբեր 2023թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	2,185	9.888
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	12	119,024	93,266
Հաճախորդներին տրված վարկեր	13	-	21,711
Ընդամենը վարկային ռիսկ		**121,209**	**114,986.888**

Տրված վարկերի դիմաց ստացված գրավներ և երաշխավորություններ

	2024թ.	2023թ.
		հազար դրամ
Վարկային երաշխավորություններ	-	28,000
Ընդամենը	**-**	**28,000**

Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը կառավարելու համար: Կազմակերպությունում կարևորագույն խնդիր է վարկերի չվերադարձման ռիսկը կառավարելը: Այդ նպատակով Կազմակերպության ղեկավարության կողմից մշակվել և հաստատվել է վարկային քաղաքականություն, որը սահմանում է վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը, պայմանագրային կողմերի վճարունակության, գրավի գնահատման մեթոդաբանությունը, վարկային փաստաթղթերի պահանջները, վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Կազմակերպությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Կազմակերպության կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է կա՛մ անկախ գնահատողի, կա՛մ Կազմակերպության մասնագետների կողմից: Կազմակերպությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև տնտեսական ճյուղերի և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ
Աշխարհագրական սեգմենտներ
2024թ.-ին և 2023թ-ի հունվար ամսից մինչ հաշվետու ժամանակաշրջանի վերջը Կազմակերպության պարտքային ռիսկերն ամբողջությամբ կենտրոնացված են եղել ՀՀ-ում:

Գործունեության ոլորտներ
Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության պարտքային ռիսկի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ գործունեության ոլորտների:

	Ֆինանսական հատված	Արտադրություն	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	2,185	-	2,185
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	119,024	-	119,024
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**121,209**	**-**	**121,209**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**242,418**	**21,711**	**242,418**

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Կազմակերպությունը ղեկավարում, սափանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Վարկային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Կազմակերպությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Վարկային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

21.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայում առկա փոփոխությունների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքի և փոխարժեքի տատանումները: Կազմակերպությունը չի տեղաբաշխել և չի ստացել տատանվող տոկոսադրույքով վարկեր: Բացի փոխարժեքային ռիսկի կենտրոնացումներից, Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի այլ կենտրոնացումներ:

21.3 Փոխարժեքային ռիսկ

Փոխարժեքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կփոփոխվի արտարժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

22. Կապիտալի համարժեքություն

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Կազմակերպությունը համատասխանի հաստատված արտաքին պահանջերին: Կազմակերպությունը շահագրգռված է պահպանելու բարձր վարկային վարկանիշ և կապիտալի առողջ նորմատիվներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և սեփական կապիտալը հետևողականորեն աճեցնելու գործում:

Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով: Անցյալ տարվա համեմատ փոփոխություններ չեն եղել Կազմակերպության նպատակներում, քաղաքականությունում և գործողություններում:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկի կշիռների ստորակարգության՝ դասակարգվելով համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի բնույթի և գնահատման: